Պահպանվել են, որպեսզի օգնեն հավաքել Իսրայելը տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքի միջոցով

1. Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 138.57–59 հատվածները՝ փնտրելով, թե ինչպես են փրկագնվում նրանք, ովքեր գտնվում են հոգիների աշխարհում:
2. Կարդացեք Առաջին Նախագահությունից նախագահ Հենրի Բ. Այրինգի ստորև բերված խոսքերը: Տեսեք, թե Փրկիչն ինչպես է վերաբերվում նրանց, ովքեր մասնակցում են տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքին:

Մտածեք Փրկչի հետ ձեր հանդիպման մասին: Դուք կունենաք այդ հանդիպումը: Նա վճարեց ձեր և Երկնային Հոր բոլոր հոգևոր զավակների մեղքերի գինը: Նա Եհովան է: Նա ուղարկեց Եղիային: Կատարյալ սիրուց մղված՝ Նա շնորհեց կնքելու և օրհնելու քահանայության զորությունները: Եվ Նա վստահեց ձեզ՝ հնարավորություն տալով լսել ավետարանը ձեր կյանքի ընթացքում, հնարավորություն տալով ստանձնել պարտավորություն՝ առաջարկել այն ձեր նախնիներին, որոնք չեն ունեցել ձեր ունեցած անգին հնարավորությունը: Մտածեք այն երախտագիտության մասին, որ Նա ունի այն մարդկանց հանդեպ, որոնք վճարում են աշխատանքով և հավատքով՝ գտնելու իրենց նախնիների անունները, և այնքան են սիրում իրենց նախնիներին և Իրեն, որ նրանց առաջարկում են հավերժական կյանք ընտանիքներում՝ Աստծո բոլոր պարգևներից մեծագույնը: Նա նրանց անսահման զոհաբերություն առաջարկեց: Նա սիրում և գնահատում է նրանց, ովքեր վճարում են այն գինը, որ կարող են՝ հնարավորություն տալու իրենց նախնիներին ընտրել հավերժական կյանքի Իր պարգևը: (Հենրի Բ. Այրինգ, «Hearts Bound Together», *Լիահոնա*, մայիս 2005, 78–79)

3. Ձեր կարծիքով, ընտանեկան պատմության և տաճարային աշխատանքին մասնակցելն ինչպե՞ս կարող է օգնել ձեզ հետևել Հիսուս Քրիստոսի օրինակին:
4. Ինչպիսի՞ անձնական փորձառությամբ, ո՞ր սուրբ գրությունով կամ Եկեղեցու ղեկավարի ո՞ր խոսքերով կարող եք կիսվել:

Պահպանվել են, որպեսզի օգնեն հավաքել Իսրայելը տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքի միջոցով

1. Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 138.57–59 հատվածները՝ փնտրելով, թե ինչպես են փրկագնվում նրանք, ովքեր գտնվում են հոգիների աշխարհում:
2. Կարդացեք Առաջին Նախագահությունից նախագահ Հենրի Բ. Այրինգի ստորև բերված խոսքերը: Տեսեք, թե Փրկիչն ինչպես է վերաբերվում նրանց, ովքեր մասնակցում են տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքին:

Մտածեք Փրկչի հետ ձեր հանդիպման մասին: Դուք կունենաք այդ հանդիպումը: Նա վճարեց ձեր և Երկնային Հոր բոլոր հոգևոր զավակների մեղքերի գինը: Նա Եհովան է: Նա ուղարկեց Եղիային: Կատարյալ սիրուց մղված՝ Նա շնորհեց կնքելու և օրհնելու քահանայության զորությունները: Եվ Նա վստահեց ձեզ՝ հնարավորություն տալով լսել ավետարանը ձեր կյանքի ընթացքում, հնարավորություն տալով ստանձնել պարտավորություն՝ առաջարկել այն ձեր նախնիներին, որոնք չեն ունեցել ձեր ունեցած անգին հնարավորությունը: Մտածեք այն երախտագիտության մասին, որ Նա ունի այն մարդկանց հանդեպ, որոնք վճարում են աշխատանքով և հավատքով՝ գտնելու իրենց նախնիների անունները, և այնքան են սիրում իրենց նախնիներին և Իրեն, որ նրանց առաջարկում են հավերժական կյանք ընտանիքներում՝ Աստծո բոլոր պարգևներից մեծագույնը: Նա նրանց անսահման զոհաբերություն առաջարկեց: Նա սիրում և գնահատում է նրանց, ովքեր վճարում են այն գինը, որ կարող են՝ հնարավորություն տալու իրենց նախնիներին ընտրել հավերժական կյանքի Իր պարգևը: (Հենրի Բ. Այրինգ, «Hearts Bound Together», *Լիահոնա*, մայիս 2005, 78–79)

3. Ձեր կարծիքով, ընտանեկան պատմության և տաճարային աշխատանքին մասնակցելն ինչպե՞ս կարող է օգնել ձեզ հետևել Հիսուս Քրիստոսի օրինակին:
4. Ինչպիսի՞ անձնական փորձառությամբ, ո՞ր սուրբ գրությունով կամ Եկեղեցու ղեկավարի ո՞ր խոսքերով կարող եք կիսվել:

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_483-1